

Ս. Ա. ԶԱԶԱՐՇԱՆ

Մատթեոս Զուղայեցին 14-րդ դարի վերջին քառորդի և 15-րդ դարի սկզբների հայ իմաստասիրական-աստվածաբանական մտքի նշանավոր ներկայացուցիչներից մեկն է: Նրա կյանքի ու գործունեության մասին պահպանվել են կցկտուր տեղեկություններ: Հայտնի չեն նրա ծննդյան ու մահվան թվականները, ծննդյան տեղը և նախնական կրթության վայրը, հասարակական-քաղաքական և գիտակրթական գործունեության մանրամասները: Ենթադրվում է, որ Մատթեոս Զուղայեցին ծնվել է 14-րդ դարի 50-ական թվականներին, հավանաբար Զուղայում, որտեղից էլ ստացել է «Զուղայեցի» անվանումը, (թեև հայ մատենագրության մեջ նրան տրվել է նաև «Պարթև» «Որոտնեցի», «Երզնկացի» անվանումները)¹, և մահացել է 15-րդ դարի երկրորդ տասնամյակում՝ Գրիգոր Տաթևացու մահվանից մի քանի տարի անց: Ըստ երևույթին Զուղայեցին իր գործունեությունը սկսել է Ապրակունյաց վանքում, սակայն, երբ Լենկ Թեմուրի զորքերը գրավում են Երնջակի բերդը, նա տեղափոխվում է Տաթևի վանքը: Այստեղ նա աշակերտում է ժամանակի խոշորագույն մտածողներ ու ուսուցչապետեր Հովհան Որոտնեցուն և Գրիգոր Տաթևացուն: Հետագայում նա Գրիգոր Տաթևացու նախածեղնությունով և հովանավորությամբ մնում է Տաթևի վանքում, խորացնում իր գիտելիքները և միաժամանակ դասավանդում Տաթևի համալսարանում: 1402 թվականին, Թոմա Սյունեցու վկայությամբ, Զուղայեցին՝ «զծաղկեալն ամենայն բարութեամբ և զարդարեալն ամենալի շնորհի՛ւ՝ վարդապետական խոհեմութեամբ և փիլիսոփէական արհեստի՛ւ՝ զախոյանն ընդէ՛մ հերձուածողաց... կամակցութեամբ սուրբ հոգոյն, և ջանիւ վարդապետին Գրիգորի, և աղաչանաբարոց աշակերտեալ անձանց՝ նստաւ յաթոռ տէլէտութեան...»²: Այդ տարիներին նա միաժամանակ եղել է Տաթևի վանքի վանահայր: Տաթևի համալսարանի գոյության ծանրագույն շրջանում՝ Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքների ժամանակ, վարդապետ Զուղայեցին դարձավ Գրիգոր Տաթևացու հավատավոր զինակիցներից մեկը, նրա հարկադիր թափառումների անբաժան ուղեկիցը և, իրրև հմուտ աստվածաբան ու քարոզիչ, իր լուսան ներդրեց միարարական շարժման ձախողման գործում: Գրիգոր Տաթևացու մահը խոր վիշտ պատճառեց Զուղայեցուն: Շուտով դրան հավելվեցին «անզութ և անհնազանդ աշակերտաց» և «սուտ եղբայրների» վիրավորանքները, որոնք ծանր անդրադարձան ծերության շեմին կանգնած վարդապետի առողջության և հոգեկան կացության վրա:

¹ Այդ մասին տե՛ս Հ. Համազասպ Ոսկեան, Ստեփանոս Վ. Ռոջբա, Մատթեոս Վ. Զուղայեցի, Վիեննա, 1968, էջ 110:

² «ԺԾ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Մասն առաջին (1401—1450 թթ.), կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1955, էջ 25:

Մատթեոս Զուղայեցիին իր ժամանակի կրթված, հանրագիտակ մտածող-ներից էր: Ինչպես նշում է Լ. Խաչիկյանը, Զուղայեցիին «իր երիտասարդական տարիներին ուսումնասիրել է ոչ միայն հայ մատենագրությունը, այլ նաև տիրապետել է արաբերեն գրավոր լեզվին, ծանոթացել է մասնագիտականների կրոնական գրքերին այն աստիճան, որ անհրաժեշտության դեպքում կարողացել է քաղվածքներ անել նրանցից և տալ յուրովի մեկնաբանություններ»³: Նա շրջագայել է Հայաստանի գավառներում, հանդես եկել քարոզներով, վիճաբանության մեջ մտել իր գաղափարական հակառակորդների հետ, ձգտել ժողովրդի և իր աշակերտների մեջ սեր արթնացնել ազգային արժեքների ու ավանդույթների նկատմամբ: Ժամանակակիցները գնահատել են նրա վաստակը, նրան անվանել «գերերջանիկ և հանճարամիտ, սրբազնամաքուր և ազնուական, ուսումնասէր անձ»:

Իրըև աստվածաբան և իմաստասեր, Մատթեոս Զուղայեցիին պատկանում է Տաթևի աստվածաբանական-իմաստասիրական դպրոցին, այդ դպրոցի նըշանավոր դեմքերից մեկն է: Իր ստեղծագործական կյանքի քսան տարվա (մեզ հասած նրա առաջին աշխատությունը թվագրված է 1391 թ., իսկ վերջինը՝ 1411 թ.) ընթացքում նա գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնք «Իրենց բովանդակութեամբ վկաներ են անոր բազմակողմանի հմտութեան»⁴. Զուղայեցու գրչին են պատկանում Հովհանի և Ղուկասի ավետարանների մեկնությունները, «Մեկնութիւն գործոց առաքելոց», «Մեկնութիւն Վեցօրէից», «Գիրք ութն խորհրդոց մեղաց», «Վասն հարցման անօրինաց. զանազան պատասխանիք» աշխատությունները, ինչպես նաև շուրջ հիսուն քարոզ, մի քանի գանձ ու տաղ, Գրիգոր Տաթևացուն նվիրված մի ներբող, ժանր գրություններ: Հիշատակված աշխատությունները գերազանցապես կրոնա-աստվածաբանական բնույթ ունեն, թեև դրանցում կրոնական-դավանաբանական սկզբունքների հիմնավորման ժամանակ ըստ անհրաժեշտության օգտագործվում են նաև իմաստասիրական-տրամաբանական բնույթի գաղափարներ ու փաստարկներ: Նման դեպքերում Զուղայեցիին հաճախակի է մեջբերումներ կատարում Արիստոտելի, Պլատոնի, Գրիգոր Նյուսացու, Դավիթ Անհաղթի, Դիոնիսիոս Արեոպագացու և ուրիշ իմաստասերների աշխատություններից: Բնազանցական, բնափիլիսոփայական և բարոյագիտական գաղափարներով հարուստ են հատկապես նրա «Մեկնութիւն Վեցօրէից», «Մեկնութիւն գործոց առաքելոց» և «Գիրք ութն խորհրդոց մեղաց» աշխատությունները: Այնուամենայնիվ, ի տարբերություն Տաթևի դպրոցի մյուս ներկայացուցիչների՝ Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և Առաքել Սյունեցու, Զուղայեցու ստեղծագործություններում իմաստասիրական գիտելիքը համեմատաբար համեստ մաս է կազմում:

Իրըև իմաստասեր աստվածաբան, Զուղայեցիին ինքնատիպ չէ (բառիս ժամանակակից ըմբռնմամբ). նա բավարարվում է միջնադարում տարածված աստվածաբանական-իմաստասիրական գաղափարների շարադրմամբ և մեկնաբանությամբ: Այս վերջին ասպարեզում նա ցուցադրում է մեծ վարպետություն: Առհասարակ Զուղայեցու մեկնությունները յուրատեսակ «հավաքումներ» են, որոնցում դիտարկվում են միջնադարյան հայ մարդուն հետաքրքրող բազմաբնույթ հարցեր: Դրանց պատասխանելիս նա օգտվում է տարբեր հեղինակներից, հետևում մշակված աստվածաբանական-իմաստասիրական սկզբունքներին, բայց միևնույն ժամանակ պահպանում է իր մտքի

³ Լ. Խաչիկյան, Մատթեոս Զուղայեցու կյանքն ու գործունեությունը, Բանբեր Մատենադարանի, թիվ 3, 1956, էջ 60:

⁴ Է. Համազասպ Ոսկեան, Ընդ. աշխ., էջ 122:

տրամաբանութիւնը, աննկատ դրսևորում վերլուծական ինքնուրույնութիւն՝ ալոց մտքերը հմտորեն ներդաշնակելով սեփական ասելիքին: Հեղինակավոր մտածողների մտքերը նրա համար սոսկ առիթ են իր համապարփակ գիտելիքները շարագրելու համար: Մեկնութիւն ընթացքում երբեմն նա այնքան է ծավալվում և հեռանում բուն տեքստից, որ դժվար է դառնում նրա գործը կոնկրետ մեկնութիւն դիտել: Այս առումով հատկապես տիպական է «Գիրք ութն խորհրդոց մեղաց» աշխատութիւնը, որ, ըստ խորագրի, 4-րդ դարի մտածող Եվագրիոս Պոնտացու երկի մեկնութիւնը պետք է լինի. սակայն այնչափ է ինքնուրույն, որ Զուղայեցու «գոեհիկ լեզուովն ու ցամաք մեկնաբանութիւններով» հիասթափված Հայր Բարսեղ Վ. Սարգիսյանը ստիպված է արձանագրել, թե «Մատթեոսի սոյն գործը իսկապէս Եւագրի մեկնութիւն չէ, այլ բանից հաւաքումն, կամ լաւ եւ քարոզատուութեան համար անկէ ժողոված նիւթեր»⁵:

Մատթեոս Զուղայեցու տեսական ժառանգութիւնը, գերազանցապես լինելով աստվածաբանական-քարոզչական բնույթի, էական ազդեցութիւն չի ունեցել հետագա դարերի հայ իմաստասիրական մտքի զարգացման վրա: Այնուհանդերձ, նրա մեկնութիւններն ու քարոզները, շնորհիվ իրենց համադրական բովանդակութեան, հետագա դարերում, հատկապես կրոնադավանաբանական պայքարի նոր փուլում՝ 17—18-րդ դարերում, որոշակի հետաքրքրութիւն են հարուցել, գտնվել են շրջանառութեան մեջ, արտագրվել տարբեր գրիչների կողմից: Իսկ 1750 թ. Կ. Պոլսում հրատարակվել է նրա «Գիրք ութն խորհրդոց մեղաց» աշխատութիւնը: 19—20-րդ դարերում նրա մասին ավելի շուտ լուր են, քան գրել: Հանիրավի մոռացված աստվածաբան-իմաստասերի անունը նույնիսկ թուրքիկ չի հիշատակվել Հ. Գաբրիելյանի և Վ. Զալոյանի հայ փրկիստփայլութեան պատմութեան ձեռնարկներում: Զուղայեցու կյանքի, գործունեութեան և մատենագրութեան հարցերին առաջին անգամ անդրադարձել է Լ. Խաչիկյանը, իսկ որոշ ժամանակ անց նաև Հ. Ոսկյանը: Զուղայեցու ընկերային-տնտեսական, մասամբ նաև իմաստասիրական հայացքները վերլուծվել են Ն. Թովմասյանի «Սոցիալ-տնտեսական միտքը Հայաստանում 15—18-րդ դարերում» մենագրութեան մեջ:

Սույն հոդվածը առաջին փորձն է ամփոփ ձևով ներկայացնելու Մատթեոս Զուղայեցու մարդաբանական-իմաստասիրական ըմբռումներն ու մտածումները, ինչը հնարավորութիւն կտա ճշտելու նրա տեղն ու դերը ինչպես Տաթևի դպրոցի, այնպես էլ միջնադարյան հայ իմաստասիրական մտքի պատմութեան մեջ:

Մատթեոս Զուղայեցու բնագանցական, տիեզերաբանական և մարդաբանական հայացքների հիմքում ընկած է արարչագործութեան գաղափարը: Ըստ նրա՝ տիեզերքը ստեղծել է Աստված, ընդ որում, ստեղծել է բացարձակ ոչընչից, որովհետև Արարչին համագոյակից ոչինչ չկար: Աստվածային արարչագործութիւնը, ի տարբերութեան բնութեան և մարդկային ստեղծագործութեան, զարմանահրաշ ու կատարյալ ստեղծագործութիւն է, որը ենթադրում է ուժի, մտքի, կամքի, ժամանակի, սիրո, համբերութեան և այլ ունակութիւնների առկայութիւն: Եվ Աստված օժտված է այդպիսի ունակութիւններով, բայց՝ «ո՛չ մարմնապէս»: Արարչագործութիւնը բացարձակ, ինքնաբաժ ու ինքնիշխան էակի կամքի և ցանկութեան արտահայտութիւնն է: Աստված արարել է տիեզերքը «ոչ ի հարկէ ումեքի», ոչ թե ինչ-որ արտաքին ուժի դրդմամբ (այդպիսի ուժի գոյութիւնը բացառվում է), այլ անձնիշխան կամքով: Նա

⁵ Սրբոյն Հօրն Եւագրի Պոնտացոյ Վարք և Մատենագրութիւնք, աշխատասիրութեամբ և ծանօթութեամբք ի լոյս ընծայեաց Հ. Բարսեղ Վ. Սարգսեան, Վննետիկ, 1907, էջ ԺԽԸ:

ինչ կամեցավ, այն էլ արարեց և ինչպես կամեցավ, այնպես էլ արարեց: Աստվածային կամքի ու մտքի ամենազորությունը բացառում է տիեզերական անիշխանություն հնարավորությունը. Աստված ամեն ինչ «կարգաւորաբար արար», որպեսզի «մի՛ խառնափնթոր երևեսցի ստեղծումն Աստուծոյ իբր անիմաստի»: Աստծո ստեղծած տիեզերքը կարգավորված է, ներդաշնակ ու կատարյալ և, իր գեղեցկութամբ ու բազմազանութամբ մարդու մեջ հարուցում է զարմանք, արթնացնում հիացմունքի ու պարծանքի զգացմունք:

Արարչագործությունը Ջուղայեցին մեկնաբանում է սիմվոլիստական հայեցակերպի տեսանկյունից: Արարված տիեզերքի գոյացություններն ու երեվույթները իրենցից վեր գտնվող աստվածային աշխարհի՝ ճշմարիտ կեցութեան, իրազեկումների անսպառ շտեմարան են: Յուրաքանչյուր գոյացություն աստվածայինի խորհրդանշանն, աստվածային իմաստության դրսևորման որևէ մեկ հատկություն է մարմնավորում: Ջուղայեցու համար արարված տիեզերքը խորհրդանշանների մի ամբողջություն է, որը պետք է «ընթերցել» ու մեկնաբանել ինչպես Ս. Գիրքը: Նրան հետաքրքրում է ոչ այնքան իրերի ու երևույթների բնական-ֆիզիկական հատկությունների ուսումնասիրությունը, որքան դրանց իմաստային ու բարոյախրատական բովանդակության բացահայտումը: Օրինակ, նրա կարծիքով երկնքի ստեղծումն իր մեջ բազում խորհուրդներ է պարունակում, և երկնքի հատկությունները յուրովի իրազեկում են աստվածային որևէ հատկություն: Երկինքն անհասանելի բարձր է, ուստի մարմնական ոչ մի բան չի կարող դրան հասնել. «Եվ սոյնպէս իմանալ տայ. գանհասանելի բարձրութիւն Աստուծոյ. զի ոչ ոք եղական միտք կարէ հասնել ի բարձրութիւն աստուածութեան նորա»⁶: Երկինքն անշափ լայն ու ընդարձակ է, և այս հատկությունը իրազեկում է աստվածային սիրո լայնությունը: Երկինքը պայծառ ու գեղեցիկ է. այս հատկությունն էլ խորհրդանշում է աստվածային գեղեցկությունը: Երկինքը մշտաշարժ է, անապական, անշոշափելի մի իրողություն, որը կարող ենք աչքով հայել. և այս հատկությունն «իմանալ տա զայն, զի թէպէտ հաւատով ճանաչեմք զնա, այլ ոչ կարեմք մտօք քննել զնա»: Բոլոր իրերի հիմքը կազմող շորս տարրերը և դրանց հատկությունները նույնպես խորհրդանշում են աստվածայինի որևէ հատկություն: Այսպես, հողը կենդանական ու բուսական աշխարհի հիմքն ու արմատն է, և հողի այս հատկությունը ցուցանում է՝ «թէ Աստուած է արմատ ամենայն արարածոց և հիմն, զի ի վերայ նորա է կառուցեալ ամենայն շունչք»⁷: Հողն իր մեջ ամբարել է բազում բնական գանձեր՝ ոսկի, արծաթ և այլն: Հողի այս հատկությունը վկայում է այն մասին, որ իմաստության և գիտության գանձերն ամբարված են Աստծո մեջ: Մարդկային կեղտերը մաքրող ջուրը խորհրդանշում է մեր մեղքերը լվացող Աստծուն: Բոլոր կենդանիներին շունչ ու կյանք տվող օդը խորհրդանշում է այն, որ առանց Աստծո չկա կյանք, իսկ լույս տվող հուրը՝ որ Աստված է մեր լույսը: Ջուղայեցու կարծիքով շորս աշխարհակազմիչ տարրերը, երկնային ու երկրային մարմինները, բույսերն ու կենդանիները, անշունչ իրերը, շարժման վեց տեսակները և այլք ծանրաբեռնված են իմաստային-վախճանաբանական շողարձակումներով: Դրանք կրում են աստվածային իմաստության հետքերը, խորհրդանշում տարբեր, նույնիսկ հակադիր երևույթներ: Մարդը ընթերցում է այդ «գիրքը» և «զանազան իմաստ ի նոցանէ» ուսանում:

Արարչագործության բնափիլիսոփայական հարցերի շոշափումից հետո

⁶ Մատթեոս Ջուղայեցի, Վասն գրքիս որ կոչի Վեցօրեայ, Մեսրոպ Մաշտոցի աճխսն Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. թիվ 2229, էջ 265ա:

⁷ Նույն տեղում, էջ 267ա:

Ջուղայեցիին անդրադառնում է մարդու հիմնահարցին: Աստվածային արարչագործությունը նպատակաբանական բնույթ ունի. Աստված ամեն ինչ արարել է մարդու համար, մարդու հոգևոր և մարմնական պահանջմունքների բավարարման համար: Ջուղայեցիին շեշտում է, որ «ամենայն արարածքս վասն մարդոյն է արարեալ և ոչ զմարդն վասն արարածոց»⁸: Եվ բնավ պատահական չէ, որ մարդը ստեղծվեց արարչագործության վերջին օրը: Դրա խորհրդանշական իմաստը, նախ, այն է, որ Աստված «ի սկիզբն ստեղծման զբանականն արար», այսինքն՝ հրեշտակներին, ուստի հարկ էր «ի կատարումն զբանականն առնել»: Երկրորդ, նախ պարտ է անարգը լինել, հետո պատվականը, ուստի սկզբում ստեղծեց այլ արարածներին, հետո՝ մարդուն: Երրորդ, արարչագործությունը դադարեցվեց «վասն պատուականութեան մարդոյս, զի թէ գոյր կարողութիւն Աստուծոյ աւելի ինչ առնել քան զոր արարն, այլ ի պատիւ մարդոյն դադարեցաւ առնել ինչ»⁹: Զորրորդ, եթե մարդուն սկզբից ստեղծեր, ապա նա իր առջև կտեսներ դատարկություն: Ուստի Աստված սկզբից ամեն ինչ նախապատրաստեց, որպեսզի մարդ օգտվի աստվածային բարիքներից: Այսինքն՝ նախ ստեղծեցին «իշխեցեալքն», ապա՝ իշխանը: Աստված մարդուն կարգեց թագավոր, արարածների տեր ու տնօրեն, «զի մատնէհար և կնիք եղ Աստուած զմարդս արարածոց. որպէս զթագաւորոք որ զգանձ իւր կնքեսցէ մատանեաւ, որպէս զի անխախտ մնասցէ. սոյնպէս և Աստուած զմարդս արար կնիք. և պահապան դնելով արարածոցս իւրոց»¹⁰: Այնուհետև, Աստված սկզբում ստեղծեց հրեշտակներին, իսկ վերջում՝ մարդուն, որովհետև եթե մարդուն վերջում շարարեր, ապա կասկած կառաջանար, թե գոյություն ունի երկու առանձին արարիչ՝ մեկն անմարմին էակների, իսկ մյուսը՝ մարմնական գոյերի համար: Ուստի մարդն արարվեց վերջում իբրև բանական-զգալի բնություն ունեցող էակ, որպեսզի ցույց տրվի, թե մեկն է բոլոր գոյերի Արարիչը: Վերջապես, մարդն ամենավերջում ըստեղծվեց, որովհետև «ամենայն իրաց կատարումն է գեղեցիկ»:

Մատթեոս Ջուղայեցիին պաշտպանում է քրիստոնեական մարդակենտրոնության այն հիմնարար դրույթը, որ մարդը արարչագործության պսակն ու վախճանակետն է, առանց որի տիեզերքը կմնար անկատար ու թերի. «մարդս է կատարումն ամենայն արարածոցս. զի յնտ սորա այլ ինչ ոչ գործեաց. և զի առանց մարդոյս թերէին արարածքս»¹¹: Բացառիկ է մարդու տիեզերական կարգավիճակը: Իր համադրական բնության շնորհիվ, նա մի կողմից «հավասար» է մյուս արարածներին, իսկ մյուս կողմից գերազանցում է դրանց: Մարդու գերազանցությունը և առավելությունը մյուս արարածների հանդեպ դրսևորվում է նախ և առաջ այն բանում, որ Աստված մարդուն ստեղծել է իր պատկերով և նմանությամբ: Մարդը նման է Աստծուն շնորհիվ իր բանական հոգու: Մարդկային հոգին իմացական է, անմարմին, անմահ և անձնիշխան: Ջուղայեցիին նմանություն է տեսնում նաև մարդու և Աստծու կազմվածքի միջև. մարդը, ինչպես և Աստված, ուղղաձիգ կազմվածք ունի: Դա ունի իր խորհրդանշական իմաստը. մարդու ուղղաձիգ կազմվածքը ցուցանում է՝ «Յէ տէր և իշխան է ի վերայ ամենայն կենդանեաց, իսկ անասունք զլիսկոր զծառայ լինենն նշանակէ, որք են ի ներքոյ հնազանդութեան մարդոյն»¹²: Հետևելով Գրիգոր Տաթևացուն, նա մարդու ուղղաձիգ կազմու-

⁸ Մատթեոս Ջուղայեցի, Քարոզգիրք, ՄՄ, ձեռ. թիվ 6607, էջ 370ա:

⁹ Մատթեոս Ջուղայեցի, Վասն գրքիս որ կոչի Վեցօրեայ, էջ 334բ:

¹⁰ Մատթեոս Ջուղայեցի, Քարոզգիրք, էջ 371ա:

¹¹ Նույն տեղում, էջ 370բ:

¹² Մատթեոս Ջուղայեցի, Վասն գրքիս որ կոչի Վեցօրեայ, էջ 328ա:

թյան պատճառ է համարում այն, որ մարդու գլխի մեջ հողը նվաղ է ու թեթև, իսկ անասունի գլխում գերակշռում է հողը, որի ծանրությունից էլ նրա կազմվածքը կոր է, գլուխը՝ մերձ հողին: Մարդու ուղղաձև կազմվածքը խորհրդանշում է նաև այն, որ մարդու ցանկությունը «ոչ է առ ստորայինքս, այլ առ Աստուած», ինչպես նաև՝ որ մարդն «ոչ է մնալոյ յաշխարհի», որպես անասունների, այլ պետք է տեղափոխի երկնային արքայություն: Մարդու ուղղաձև կազմվածքը պայմանավորված է նաև նրա էություն, կոշտմի և գործունեության բնույթով: Զուգայեցու կարծիքով «մարդս կրկին գործ ունի առնելոյ. զի մի ոտիւք ընթանայ և միւսն, զի առնէ արուեստ և գործք զիւր ձեռօք: Արդ՝ զի անասունք ոչ ունին միտք, որով առնեն արուեստ, վասն որոյ ոչ պիտոյանա նոցա ձեռք: Իսկ մարդս ունի իմաստութիւն և գիտութիւն, արուեստ և բան, որոց կարօտանան ձեռք. վասն որոյ ի հարկէ ի վերայ Բստից կանգնեցաւ և զերկուսն ուղիղ գործի շինեաց բնութիւն բանին և արուեստին»¹³:

Թեև Աստծու և մարդու միջև նմանություններ կան, այնուհանդերձ նրանց էությունները նույնական չեն: Օրինակ, Աստված կանխագետ է, իսկ մարդը՝ ոչ, որովհետև Աստված անեղ է էությունմբ և կարող է իմանալ անեղը, իսկ մարդը եղական է, ուստի անեղը չի կարող իմանալ: Երկրորդ, Աստված անշափ է, նրա իմացության համար ոչ մի սահմանափակում չկա. նա կարող է իմանալ անցյալը, ներկան և ապառնին, իսկ «մարդս շափաւոր է մըտօք և հոգով և մարմնով, վասն որոյ զշափաւորն կարէ իմանալ: Երրորդ, ամեն ինչ որ լինում է, Աստծու կամքով է լինում, իսկ մարդու կամքը ամենակարող չէ և չի կարող իշխել ամեն ինչի վրա: Կավագույն դեպքում նա ձգտում է նմանվել աստվածային կամօրին:

Համեմատելով մարդուն և հրեշտակներին, Զուգայեցին նշում է, որ հրեշտակներն առավելություն ունեն մարդկանց նկատմամբ, քանի որ նրանք առաջինն ստեղծվեցին, ընդ որում ստեղծվեցին լույսից և ոչ թե հողից, և իրենց անմահ բնությամբ ավելի մերձ են աստվածայինին, քան մարդը: Բայց, այնուհանդերձ, Աստված նախապատվությունը շնորհել է մարդկանց: Այսպես, մեր բնությունից Աստծու որդին մարմին առավ և ոչ թե հրեշտակաց: Մենք Աստծու ձեռքով ստեղծվեցինք, իսկ հրեշտակները՝ «բանի միայն», ինչպես անասունները: Մենք մեր արյան գնով ենք արքայություն մտնում, իսկ նրանք չեն կարող արյուն հեղել, որովհետև անմարմին են: Մենք կարող ենք մեղք գործել և ապաշխարել, իսկ նրանք զուրկ են այդ հատկությունից: Մենք կարող ենք մերձենալ հրեշտակների դասին և նույնիսկ դրանից էլ վեր բարձրանալ: Աստված նախապատվությունը տվեց մարդուն, որովհետև երկիրը ոչ թե հրեշտակաձև ստեղծեց, այլ մարդակերպ: Եվ, վերջապես, հրեշտակների նկատմամբ մարդու գերազանցություն մասին է վկայում այն կարեոր փաստը, որ Աստված հրեշտակներին ստեղծեց մարդկանց ծառայելու նպատակով:

Իբրև աստվածային արարչագործության գլուխգործոց, մարդը կատարյալ էակ է: Նա երկու բնության՝ հոգու և մարմնի միասնություն է, մի «գեղեցկայարմար շինուած»: Զուգայեցու կարծիքով հոգին և մարմինը նույն Արարչի ստեղծագործության արդյունք են, ուստի ծագումնաբանորեն հավասարարժեք գոյացություններ են: Բայց իր հատկություններով և դերառությամբ հոգին պատվական է, քան մարմինը: Հոգին սփռված է մարդու մարմնի բոլոր մասերում և մարմնի կենդանության ու շարժման աղբյուրն է: Մարմինը բաղկացած է նյութից՝ շորս տարրերից, ուստի մահկանացու է: Իսկ հոգին աննյութական է և անմահ: Պատասխանելով այն հարցին, թե ինչու է մարդ

¹³ Նույն տեղում, էջ 328ա-բ:

ստեղծվել հոգուց և մարմնից, Զուղայեցիին պատասխանում է՝ «վասն զի մարդն միշոց և շողկապ է ամենայն արարածոց. զի ի գոյիցն ոմանք անմարմին են որպէս հրեշտակք. և ոմանք մարմին որպէս զգալիքս: Իսկ մարդս խառնեալ է յանմարմնոյ և ի մարմնոյ. զերկուքն մի յարմարելով զարարածս»¹⁴: Դրա խորհրդանշական իմաստն այն է, որ Աստված մարդուն ստեղծեց իբրև «տէր ու ժառանգ երկուց աշխարհաց», որպեսզի նա մարմնով վայելի մարմնավոր կյանքը, իսկ հոգով ժառանգի հոգևոր կյանքը: Թեպետ հոգին և մարմինը հակադիր գոյացութիւններ են, այնուհանդերձ նրանք կապված են միմյանց հետ, մեկը կրում է մյուսի ազդեցութիւնը և ներգործութիւնը. «զի ո՛չ է մարդ սոսկ ոգի, քանզի խառնեալ է ընդ մարմինն և ո՛չ է ցանկութիւն մարմնոյ առանց հոգոյ, քանզի և կատարեալ մասն հոգոյն է ցանկութիւն...»¹⁵: Եթե մարմինը վնասվածք է ստանում, ապա հոգին կսկրծում է նրա համար, այսինքն մարմնական տառապանքը ծնում է հոգեկան ցավ: Միևնույն ժամանակ հոգին ներգործում է մարմնի վրա, զսպում մարմնական երկրասեր ցանկութիւնները, հսկում և ղեկավարում մարմնի գործողութիւնները: Սակայն, դրանց «համերաշխ» կյանքը տեական բնույթ չունի: Իրենց էութեամբ հակադիր լինելով, երկրային կյանքում հոգին և մարմինը գտնվում են մշտական «պատերազմական» վիճակի մեջ: Ըստ Զուղայեցու նրանց միջև «խաղաղութիւն» կարող է հաստատվել հետևյալ պայմանների պահանջանքով. ա) եթե մարմինը հնազանդվի հոգուն, բ) եթե արտաքին զգայութիւնները հետևեն ներքին զգայութիւններին, գ) եթե հոգու ներքին մասերը՝ ցասումն ու ցանկութիւնը ենթարկվեն հոգու բանական մասին: Սակայն, այս հարցում Զուղայեցիին այնքան էլ լավատես չէ: Նրա կարծիքով երկրային կյանքում հոգու և մարմնի հակամարտութիւնն անլուծելի է, դրանց միջև հաշտութիւն կարող է հաստատվել միայն երկնային կյանքում. «զի աստ խոռութիւն է ի մէջ հոգոյ և մարմնոյ, այսինքն հոգի ցանկայ հակառակ մարմնոյ. և մարմինն ցանկայ հակառակ հոգոյ, իսկ անդ բառնի պատճառ այնմ խոռութեան. և լինի խաղաղութիւն ի մէջ սոցա»¹⁶:

Զուղայեցու կարծիքով մարդը տարբերվում է տնկական ու զգայական հոգի ունեցող գոյացութիւններից այն բանով, որ նա օժտված է նաև բանական հոգով, այսինքն՝ ճանաչելու, ինքնագիտակցելու ունակութեամբ: Աստված մարդուն ամենավերջում ստեղծեց, որպեսզի մարդ զիտութեամբ ճանաչի բնութիւնը, բուսական և կենդանական աշխարհը և իր իշխանութիւնը հաստատի դրանց վրա: Մարդկային բնութիւնը հակված է նախ և առաջ ճանաչելու մարդու զգայարանների վրա ազդող անմիջական զգալի-նյութական իրողութիւնները, ուստի Զուղայեցիին կարծում է, որ «առանց մարմնոյ ոչ ինչ իսկապէս իմացումն լինի»: Աստված մարդուն պարգևել է զգայարաններ, որոնց միջոցով նա «զամենայն ինչ տեսանէ և լսէ»: Յուրաքանչյուր զգայարան կատարում է ի վերուստ իրեն սահմանված ճանաչողական գործողութիւն և, դրանով իսկ, ապահովում աշխարհի զգայական ընկալման ամբողջականութիւնը: Անշուշտ, ճանաչողական առումով դրանց միջև զգալի տարբերութիւններ կան: Զուղայեցիին ճանաչողական օրգաններից առանձնացնում է աչքը՝ իբրև կատարյալ ճանաչողական գործիք: Նա աչքը համեմատում է հրի հետ, որը հողից, ջրից և օդից բարձր է գտնվում: Ինչպես լուսատուներն են երկնքում, այնպես էլ «աչքն ի գլուխ մարդոյս. նախ, զի

¹⁴ Մատթէոս Զուղայեցի, Քարոզգիրք, էջ 213ա:

¹⁵ Մատթէոս Զուղայեցի, Մեկնութիւն Գործոց առաքելոց, ՄՄ, ձեռ. թիվ 1402, էջ 184ա:

¹⁶ Մատթէոս Զուղայեցի, Ի գլխոյն Գուկաս Աւետարանիչի, ի Մեկնութեան Իգնատիոսի սուրբ վարդապետի, ՄՄ, ձեռ. թիվ 1345, էջ 18ա:

հաւասար տեսցէ և զամենայն տեսցէ. և զհետուն տեսցէ, անապականս ճանաչեսցէ»: Աշքի նման հատկությունների թվարկումից երևում է, որ Զուղայեցու համար աշքը սովորական զգայական օրգան չէ. նրանով ճանաչվում են նաև աննյութական իրողությունները: Աշքը մյուս զգայարաններից պատվական է նաև այն բանով, որ «առաջնորդում» է բուրբին:

Զուղայեցու կարծիքով ճանաչողության զգայական աստիճանը սահմանափակ բնույթ ունի. այն երբեմն սխալվում է, անկարող լինում խորամուխ լինել իրերի էություն մեջ: Բանականության օգնությամբ մարդ ավելի խոր և ընդարձակ գիտելիքներ է ձեռք բերում իրեն շրջապատող աշխարհի վերաբերյալ: Զուղայեցին չի հակադրում իրար զգայական և բանական իմացության աստիճանները, այլ, ընդհակառակը, դրանց միջև տեսնում է միասնություն և կապ: Հարկ է նշել, որ նրա աշխատություններում խոսքը ոչ այնքան իմացության աստիճանների, որքան գիտենալու ձևերի մասին է, (որոնք նա անվանում է «գիտութիւնք»): Հայ իմաստասերը տարբերակում է գիտենալու շորս ձև. առաջինը «պարզաբար» գիտությունն է, որն իր բովանդակությամբ հիշեցնում է առօրյա-կենցաղային գիտելիքը: Օրինակ, «պարզաբար» գիտություն է այն, որ «գիտեմք զքարն որ ոչ է փայտ»: Երկրորդը պատճառների իմացության վրա խարսխված գիտությունն է: Օրինակ, քարը պինդ մարմին է, որովհետև նրա բաղադրության մեջ բացակայում է հուր տարրը: Երրորդ ձևը «ծանոթութեամբ գիտելն» է, որը փորձնական գիտելիքի նմանակն է: Նման դեպքում փորձի («գործի») ընթացքում ճանաչում ենք քարի հատկությունները և դրա հիման վրա այն առանձնացնում այլ քարերից: Չորրորդը՝ «շահաւետութեամբ և վայելչութեամբ գիտելն» է: Այս վերջինը գիտենալու յուրահատուկ և հետաքրքրական ձև է. այդպիսի գիտելիքը մեզ շահ ու օգուտ է բերում՝ բավարարելով մեր նյութական ու հոգևոր պահանջմունքները: Նույն աշխատության մեջ Զուղայեցին տարբերակում է «գիտենալու» ևս շորս ձև: Առաջինն այն է, երբ ճանաչում ենք իրերի արտաքին կերպերը: Երկրորդը՝ երբ մարդկանց ճանաչում ենք ըստ նրանց կատարած գործերի: Երրորդը «ըստ էության գիտութիւնն» է, որի ժամանակ բացահայտում ենք իրերի էությունը: Գիտենալու շորրորդ ձևը Զուղայեցին անվանում է «իմաստասերների գիտութիւն», որի դեպքում ուրիշ մարդկանց ներաշխարհը, հոգեվիճակը կամ տրամադրությունը ճանաչում ենք՝ հենվելով սեփական հոգեվիճակի վերլուծության վրա:

Զուղայեցու կարծիքով բնության, շրջապատող աշխարհի ճանաչողությունը մարդկային իմացության նվազագույն նպատակն է: Զգայական և բանական իմացությունը, գիտենալու ձևերը աստվածայինի ճանաչման նախնական փուլն են: Եթե մենք «բնական» իմացությունը դիտում ենք իբրև առհասարակ ճանաչողության սահման, ապա նման դեպքում «գիտեմք կարծելով թէ դիտուն հմք, սակայն անկատար մնամք, զի խառնի ի մեզ երկրային իմաստ և ախտք մարմնական և ոչ թողուն ի կատարեալ իմաստն մերձաւորեալ»¹⁷: Դրիգոր Տաթևացու նման Զուղայեցին կարծում է, որ «բնական» ճանաչողությունից վեր շքարձրանալու հիմնական պատճառն այն է, որ մարդ չի հավատում այնպիսի իրողությունների գոյությանը, որոնք անմիջականորեն չի տեսնում, չի շոշափում, չի լսում և չի զգում: Բանն այն է, որ այդ վերզգայական ու վերբանական իրողությունները մարդ չի էլ կարող իր զգայություններով և բանականությամբ ճանաչել: Հետևաբար, մարդ նախ և առաջ պետք է իմանա իր ճանաչողական կարողությունները և դրանց «բնական» սահմանները: Զուղայեցու համոզմամբ մարդիկ պետք է գործեն իրենց ճանաչողա-

¹⁷ Մատթեոս Զուղայեցի, Վասն գրքիս որ կոչի Վեցօրեայ, Լջ 305բ:

կան ունակութուններին համապատասխան. «որքան կարեմք իմանալ, զայն որոնեսցուք, որ և այս խրատէ մեզ, զի որ բնութիւն հասանէ՝ անդ և գիտութիւն, ասէ փիլիսոփայն (Դավիթ Անհաղթը— Ս. Զ.), արդ՝ բնութիւն մեր հետի է ի հրեշտակաց, ապա և ոչ գիտութիւն մեր հասանէ ի նոսա»¹⁸: Ուշագրավ է Զուղայեցու այն միտքը, որ երբ ցանկանում ենք մտքով քննել Աստծուն, նախ, հեռանում ենք նրանից, երկրորդ, Աստծուն իջեցնում ենք մեր ըմբռնման մակարդակին՝ դիտելով այն իբրև արարված գոյացութիւն. «Եվ զի զԱստուած ի քննութիւն արկանելով հեռանամք ի նմանէ: Զոր օրինակ ոք կամի ընդ արեգակն հայիլ. և յանգզնի գէութիւն նորա տեսանել. ոչ կարէ, այլ մանաւանդ կուրանայ աչքն: Նմանապէս քննութիւն որ առ Աստուած. ոչ կարեմք իմանալ զնա. և ոչ միայն թէ ոչ կարեմք. այլ և զԱստուած ի մեր կարգս բերեմք. և ստեղծուածոյ նման համարեմք: Այլ զԱստուած պարտ է հաւատով ընթանել: Զի հաւատն ի նմանէ է հեղումն վասն որոյ նովաւ կարեմք ըմբռնել զնա»¹⁹: Զուղայեցին պնդում է, որ մարդ չի կարող ճանաչել աստվածայինի էութիւնը, չի կարող ճանաչել նույնիսկ «զորպիսութիւն գոյացութեան էիցս, թէ որպէս ստեղծանէ Աստուած» նրանց, ի մասնավորի, չի կարող իմանալ ժամանակի էութիւնը:

Ըստ Զուղայեցու, դա բնավ էլ չի նշանակում, թե մարդ չի կարող առհասարակ պատկերացում կազմել աստվածային գործերի մասին: Աստված մարդուն օժտել է զգայութիւններով և բանականութեամբ, որպեսզի նա իմացութեամբ ճանաչի իր Արարչին:

Զուղայեցին հեռու է հավասարութեան նշան դնելուց բանական քննութեան և հավատի տեսութեան միջև: Նրա համոզմամբ հավատը գերազանց է բանականութեան, հավատի տեսութեան՝ բանական քննութեան նկատմամբ: Միաժամանակ նա այդ երկու տեսութիւնը չի հակադրում իրար, այլ դրանք դիտում է իբրև միասնական ճանաչողութեան տարբեր մակարդակներ: Ղուկասի Ավետարանի մեկնութեան մեջ նա իմաստութիւնը բաժանում է տեսականի և գործնականի և տեսական գիտութեան մեջ ներառում գիտութիւնը և հավատը, որոնց միջոցով էլ հնարավոր է դառնում «ամբառնալ յաստուածային տեսութեան, մերձաւոր լինիլ անմահ վարուցն և հրաշալի խորհրդոյն»: Պատահական չէ, որ բազմիցս գործածելով «իմաստութիւն» եզրը, նա դրանով նշանակում է թե՛ իմաստասիրութիւնը («բանական քննութիւնը») և թե՛ աստվածաբանութիւնը (հավատի տեսութիւնը), և հենց այդ իմաստով հանդես է գալիս իբրև իմաստութեան ջատագով: Իմաստութեան ձեռք բերումը բազում առումներով օգտակար է: Իմաստութիւնը մարդուն տալիս է փառք և առաջնորդութիւն, որովհետև իմաստուններն են տիրում աշխարհին և ոչ թե հիմարները: Իմաստութիւնն անկողոպտելի գանձ է, մարդու անմահութեան գրավականը, քանզի այս կյանքում ամեն ինչ անցողիկ է, իսկ իմաստութիւնը՝ անմահ: Օրինակ, թեպետ մարգարեները մեռան, ասկայն «իմաստքը նոցա դեռևս կան»: Իմաստութիւնը մարդկանց միայն փառք ու պատիվ, անմահութիւն չի տալիս, այլև իրար է մերձեցնում տարբեր ազգերի մարդկանց: Իմաստութիւնն ազգային սահմաններ չի ճանաչում. «զի թէ բազում ազգ որդի ուրուք ոչ կարէ սփռիլ յամենայն ազգ, իսկ իմաստութիւն յամենայն լեզուէ կարէ խօսիլ. և ամենայն ազգաց հնարէ մերձաւորիլ, ապա գեղեցիկ է իմաստութիւն»²⁰: Նյութական ունեցվածքը կարող է պատկանել միայն մեկին, օրինակ, ազարակը չի կարող հանուրի սեփականութիւնը լինել:

¹⁸ Նույն տեղում, էջ 264ա:

¹⁹ Մատթեոս Զուղայեցի, Քարոզիչը, էջ 363բ—369ա:

²⁰ Մատթեոս Զուղայեցի Մեկնութիւն Գործոց առաքելոց, էջ 262բ:

բայց այլ է «գիտութիւն հոգևոր. կարէ լինել իւրաքանչիւր ումեք հաւասար. և միոյն լինի բոլորն առանց պակասութեան միւսոյն...»: Այս հարցում Զուղայեցին պաշտպանում է Հովհաննես Պլուզ Երզնկացու տեսակետը, որը նույնպէս իմաստութիւնը դիտում էր իբրև համամարդկային արժեք, տարբեր ազգերին հոգեպես միավորող կամուրջ: «Մեկնութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մեջ, որտեղ իմաստութիւնը դարձյալ ըմբռնվում է որպէս աշխարհիկ և հոգևոր գիտելիքների ամբողջութիւն, Զուղայեցին իմաստութիւնը համեմատում է թագավորի և թագավորութեան հետ և բազում օրինակներով ցույց տալիս, որ իմաստութիւնն առավել է թագավորութիւնից, իսկ իմաստունը՝ թագավորից: Այսպէս, թագավորից էլ զորավոր ուժ կա, որ կարող է հափշտակել նրա ունեցվածքը և գանձերը, իսկ իմաստունին «ոչ ոք կարէ թալանել»: Թագավորը մեռնում է, իսկ իմաստունն անմահ է մնում: Թագավորը զգում է իմաստութեան կարիքը, իսկ իմաստունը չի կարողում թագավորութեան: Թագավորները սովորում են իմաստութիւն և երկնշում իմաստունների նախատինքներից: Թագավորներն ավելի մերձ են երկրային-նյութական աշխարհին, նրանք զորանում են մարմնապէս, իսկ իմաստունները մերձ են աստվածային աշխարհին և զորանում են հոգեպէս:

Միջնադարյան շատ հայ մտածողների նման Զուղայեցին մարդկային իմացութեան գերագույն նպատակը դիտելով աստվածայինի ճանաչումը, «երկրային իմաստ» բովանդակող գիտելիքից ձերբազատվելու հերթապահ կոչերի հետ մեկտեղ կարևորում է բնական քննութեան անհրաժեշտութիւնը: Նա նշում է, որ առանց աշխարհի մասին գիտելիքների հնարավոր չէ բարձրանալ աստվածայինի իմացութեանը. «զի դժուարին է անուսումն մարդոյ զաստվածաբանականսն իմանալ»: Զուղայեցին գիտելիքը գնահատում է օգտակարութեան տեսանկյունից. այն գիտելիքը, որ օգուտ է տալիս մարդկանց, ծառայում է հոգու փրկութեանն ու աստվածայինի ճանաչմանը՝ ընդունելի է: Նույնիսկ կախարհներէ, հերձվածողների, աստղաճուղակների պրպտումները, որոնք բնդհանուր առմամբ «ո՛չ է արժան մեզ ուսանել», որոշ դեպքերում կարող են օգտակար լինել: Օրինակ, այն հարցին, թե ինչո՞ւ է եկեղեցին օգտագործում տոմարը, Զուղայեցին պատասխանում է, թե դրանով շնք մեղանշում, որովհետև «ո՛չ թէ ջանամք զնոյն ստեղծանել, այլ ստեղծեալն քննելով առ ի յօգտութիւն մեզ ուսեալ ինչ ի նոցանէ. սոյնպէս և տօժարն. ո՛չ թէ զնութիւն ժամանակին ջանայ գիտել, որ Աստուծոյ միայն է գիտելի, այլ զարարեալն Աստուծոյ իմանայ, որ է շրջան արեգակի և լուսնի և զթիւ տարուոյն, որով կարացուք գիտել զշահն. այսինքն զըորս յեղանակս, ի նոսա վարել և հնձել...»²¹: Ի՞նչ օգուտ այն գիտութիւնից, հարցնում է Զուղայեցին, եթե դա չի ծառայում մարդկանց, եթե կոչված չէ հաստատելու բարին, ինչպէս, օրինակ, «զի՞նչ օգուտ յարեգակէ, եթէ ոչ տացէ զլոյս իւր» կամ ի՞նչ օգուտ գանձից, եթե այն թաղված է հողում և այլն: Ուստի, եզրակացնում է հայ իմաստասերը, «լաւ է անիմաստն որ ծածկէ զտգիտութիւն իւր, քան զայն որ իմաստուն է և ծածկէ զգիտութիւն...»:

Զուղայեցին իմաստութիւնը բաժանում է տեսական և գործնական գիտութեան: Տեսական և գործնական գիտութիւնների հարաբերակցութեան հարցը նա լուծում է Դավիթ Անհաղթի փիլիսոփայութեան ոգով: Նրա կարծիքով «նախ տեսականն է, և ապա գործնականն, և յայտմանէ յայտ է, թե ուսանին առաջինն է պատուական քան զգործնականն», և իսկույն ավելացնում է՝ «բայց այդ թէպէտ զուսանիլն առաջ ասացուք, բայց գործն ցուցանէ զու-

²¹ Նույն տեղում, էջ 57ա:

սումն, զի առանց գործոյ ոչինչ են»²²: Տեսությունը շունի այն արժեքը, եթե ամրապնդված չէ գործով: Ըիրշտ է, «առանց գիտութեան բազում անգամ գործըն» սխալ ուղիով է ընթանում, սակայն տեսությունն ինքնին ոչինչ է, եթե չի վերածվում գործի: Ինքնին տեսական գիտության տիրապետելը դեռևս բարիք ու առաքինություն չէ, որովհետև հնարավոր է տեսական գիտելիքն ի շարն օգտագործել: Եվ եթե իմացողն է հակվում դեպի շար գործերը, ապա նա արժանի է ամենախիստ պարսավանքի, որովհետև իմաստունների, հոգեվոր առաջնորդների գործած թեթևագույն մեղքն անգամ հասարակ ժողովրդին «գայթակղին անբժշկելի»: Համոզված լինելով, որ «բազում պակասութիւն է առանց գործելոյ ուսուցանելն», նա հավանություն է տալիս Պլատոնի հանրահայտ այն մտքին, թե «ոչ գլուխագէտն գովեմ և ոչ որ բազում բանս գիտէ առնուլ ի բերան, այլ թէ որ անարատ կեանս ստացեալ ունի յանձինն»²³:

Մատթեոս Զուղայեցու գործնական իմաստասիրության հիմքում ընկած է անձնիրշխան, ազատակամ մարդու գաղափարը: Մարդը, ի տարբերություն մյուս արարածների, ստեղծվել է անձնիրշխան: Եթե նա ընտրելու հնարավորություն, ազատ գործելու բնական իրավունք չունենար, ապա կնմանվեր անձան կենդանիներին, որոնք անվերապահորեն ենթարկվում են «բնական կարգին»: Սակայն Աստված «զմարդն յանձնիրշխան արար և բանական և ոչ իբրև անասուն, յորում պարանոցին առասան դնեմք և քարշիմք ուր և պիտոյ է: Եթէ հարկիւ քաջէր լինէր կրկին վնաս: Նախ՝ զի ի կարգի անասնոց լինէր մարդն: Եւ ապա զի ոչ լինէր վարձ, որպէս յայտնի է ի նորածին մանկունսն, որ միայն մեռանին մկրտեալք և սակաւ ունին վարձք, զի ոչ ունին զաշխատութիւն անձնիրշխան կամացն»²⁴: Եթե մարդ անձնիրշխան չլիներ, ապա պատասխանատու չէր լինի սեփական արարքների, հատկապես շարագործությունների համար: Զարիքների գոյության համար նա կփնտրեր քավության նոխազ և, առաջին հերթին, մատնացույց կաներ Աստծուն: Բայց Աստված մեղավոր չէ շարիքների գոյության համար, որովհետև «ստոյգ բարի անձնիրշխանութիւն աստուածային է, որ ոչ կարէ շար լինել»: Ծնթադրենք, գրում է Զուղայեցին, մի մարդ դանակով սպանում է մեկ ուրիշին: Տվյալ դեպքում չենք կարող ասել, թե շարագործը դանակ պատրաստողն է, քանի որ դանակը ընդամենը գործիք է, որը կարող է օգտագործվել թե՛ բարի և թե՛ շար նպատակների համար: Ինչպես չենք կարող սպանության համար մեղադրել դանակ պատրաստողին, այնպես էլ չենք կարող մարդկային շարիքների գոյության համար պատասխանատու դիտել բարի էություն ունեցող Աստծուն:

Զուղայեցին կարծում է, որ Աստված մարդուն ստեղծել է իբրև հասարակական էակ: Մարդկանց ֆիզիկական ու հոգևոր էությունն այնպիսին է, որ «կարօտեն միմեանց»: Այսպես, մարդ ունի աչք ուրիշներին տեսնելու համար, ականջ՝ ուրիշներին լսելու համար, լեզու՝ ուրիշների հետ խոսելու համար, ձեռքեր՝ տալու և առնելու համար: Մարդիկ համահավաք ապրում են քաղաքներում և գյուղերում, որովհետև ունեն «առ միմեանս կարօտութիւն» Աստված այնպես է արարել մարդկանց, որ «պարտիմք հաղորդել զմիմեանս»: Այդ հաղորդակցությունը, ըստ Զուղայեցու, ունի երկու կողմ՝ հոգևոր և մարմնական: Հոգևոր հաղորդակցությունն այն է, որ «եղիցի մեզ մի հաւատ, և նոյն լոյս, և մի սիրով շողկապիմք ի յԱստուած»: Իսկ նյութական հաղորդակցությունն այն է, որ Աստված ամեն ինչ ստեղծել է բոլորի և ոչ թե միայն ընտրյալների համար: Թեև բոլոր մարդիկ հավասար են Աստծու առաջ

²² Մատթեոս Զուղայեցի, Ի գլխոյն Ղուկաս Աւետարանիչից..., էջ 25բ:

²³ Մատթեոս Զուղայեցի, Մեկնութիւն Գործոց առաքելոց, էջ 18ա:

²⁴ Նոյն տեղում, էջ 304ա:

և տեսականորեն պետք է միասնաբար օգտվեն Աստուծու ստեղծած բարիքներից, սակայն իրականությունն այն է, որ հասարակական կյանքում տիրապետում է անհավասարությունը: Հասարակական ունեցվածքն անհավասար ու անարդար է բաշխված: Ֆրիկի բառերով ասած՝ «Մէկին հազար ձի ու ջորի, Մէկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի, Մէկին հազար դեկան ոսկի, Մէկին ո՛չ փող մի պղղնձի»: Ո՞րն է այս անհավասարության պատճառը, ինչո՞ւ «ոչ հասարակաց ետ Աստուած զինչս որպէս զարեն, և զօղն, և զանձրես, և զհողս»: Գրիգոր Տաթևացու նման Զուղայեցիի ընկերային անհավասարության փաստը բացատրում է աստվածային նախախնամությունով: Աստուծու կամոք են ստեղծվել հարուստներ և աղքատներ, որոնք կոչված են համագործակցելու, իրար լրացնելու, մեկը մյուսի կարիքը հօգալու, «վաճառելով ի միմեանց զմարմնաւորն և զհոգեւորն և երկուքին շահել աւգտեցցին...»: Նախախնամությունով տրված անհավասարությունը չի հակասում ընկերային ներդաշնակության գաղափարին, որովհետև անհավասարությունը չի խոչընդոտում, այլ, ընդհակառակը, դրդում է հակադիր կողմերին հաղորդակցության և համագործակցության շահավետ ուղիներ փնտրել: Անհավասարության հիմքի վրա խարսխված ընկերային ներդաշնակության գոյատևման նախապայմանը հասարակական և բարոյական պարտավորությունների կատարումն է, այսինքն՝ ծառաները պետք է հնազանդ լինեն իրենց մարմնավոր տերերին, իսկ տերերն էլ պետք է շնեղեն իրենց ծառաներին²⁴:

Ընկերային համերաշխության ապահովման գործում Զուղայեցիի կարեվոր տեղ է հատկացնում կառավարման խնդրին: Նա տարբերակում է կառավարման երկու ձև՝ «իշխանաբար» և «հասարակաբար»: «Իշխանաբար», այսինքն՝ բռնությունով, բիրտ ուժով կառավարումն իր բնույթով և հետևանքներով սկզբունքորեն հակադիր է «հասարակաբար» կառավարմանը: Բռնակալությունով կառավարումը մարդկանց իրարից բաժանում է, առաջացնում թշնամություն, անվստահություն, ատելություն, մարդատյացություն, հրահրում արյունոտ ընդհարումներ, իսկ «հասարակաբար», այսինքն՝ ընդհանուր, ժողովրդական կառավարումը մերձեցնում է մարդկանց, նրանց մեջ արթնացնում կարեկցանքի, սիրտ, գթասրտության զգացմունք: Զուղայեցիի անվերապահորեն կողմնակից է այս վերջին կառավարման ձևին և ջանկատում է, որ դա հաստատվի կառավարում ենթադրող հասարակական բոլոր օղակներում, այդ թվում կրթական օջախներում:

Հասարակական հարաբերությունների և անհատի կատարելագործման հարցը Զուղայեցիի կապում է բարոյական առաքինությունների ձեռք բերման հետ: Նա առաքինությունները բաժանում է երեք խմբի՝ «արդիւնական» (ձեռք բերովի), երբ մարդ իմանալով, կամովի է հանձն առնում գործել առաքինություն: Երկրորդը բնածին առաքինությունն է, որով օժտված հին նաև կենդանիները (օրինակ, տատրակը ի ծնն ողջախոհ է, առյուծն՝ արի և այլն): Երրորդը ի վերուստ տրված առաքինությունն է, որով օժտված են միայն ընտրյալները: Առաքինության այս երեք ձևերին համապատասխանում է մարդկանց բնորոշ երեք շնորհ՝ կրթական, բնական և աստվածատուր: Կրթական շնորհն այն է, որ մարդ ձեռք է բերում ուսուցման և դաստիարակության միջոցով, բնականը՝ որ «ի ծննդենէ ունի զբարիոք խառնուածն», իսկ աստվածատուրը՝ որ տրվում է ի վերուստ լոկ ընտրյալ մարդկանց:

Առաքինի լինելու համար կամային մեծագույն ջանքեր են անհրաժեշտ, որովհետև մարդու «թշնամիները» բազում են: Դրանք են մարմնական և երկ-

²⁴ Այդ մասին տե՛ս Ն. Թովմաշյան, Սոցիալ-տնտեսական միտքը Հայաստանում 15—18-րդ դարերում, Երևան, 1982, էջ 17—18:

բային ցանկությունները, աշխարհիկ վայելքները և այլն: Զուղայեցին իր «Գիրք ութն խորհրդոց մեղաց» աշխատության մեջ թվարկում է հատկապես ութ մեղքեր, որոնք առավել կորստաբեր են մարդկանց համար: Դրանք են՝ որկրամոլությունը, պոռնկությունը, արծաթասիրությունը, տրամուխությունը, բարկությունը, ձանձրությունը, նորափառությունը և հպարտությունը կամ ամբարտաւությունը: Նա մեկ առ մեկ քննում է դրանցից յուրաքանչյուրի առաջացման պատճառները և դրանց բնորոշ «ոճիրները»: Օրինակ, ըստ Զուղայեցու, որկրամոլությունը «բաղկանայ ի բազմաց»՝ սովորությունից, լյարդի, աղիքների և ստամոքսի հիվանդությունից, կերակրի կարոտությունից, աղքատությունից, ունեցվածքի առատությունից, բժիշկների ու խրատողների յակասությունից, մտքի հիմարությունից, աշխատանքից և այլն: Որկրամոլության պատճառած բազում վնասներից մեկն այն է, որ դա «խաւարեցուցանէ զմիտս, զի յորժամ բազում կերակուր լինի կերեալ ոք, վասն այն պարտէ բազում ժամս քնել և յայնպիսի թմբուրեան գոլով՝ կուրանայ միտքն յաստուածային տեսութիւնէն»²⁵: Վերոհիշյալ մեղքերից Զուղայեցին առանձնացնում է արծաթասիրությունը՝ իբրև «արմատ ամենայն շարեաց»: Արծաթասերը «հարկիւ գող» է, անխիղճ, եղբայրատյաց, մարդասպան, որ նեղության պահին հանուն արծաթի «զմահ ոչինչ համարի»: Արծաթասիրությունը առաջանում է աղքատությունից, ծուլությունից, ծերությունից, հիվանդութեանից, «ի կասկածանաց սովու», հպարտությունից, հուսահատությունից և հարքստանալու մոլուցքից: Դեերը, որոնք մարդուն հրահրում են հանցանք գործելու, տվյալ դեպքի համար բերում են գայթակղիչ փաստարկներ: Օրինակ, նրանք մարդուն ասում են, թե քահանաները բազում գանձ են կուտակել, որ «ամենայն ինչ հոգևոր՝ ի ձեռն արծաթոյ լինի», ուրեմն դու էլ փութա գանձեր կուտակել: Կամ՝ «դու մեծ մարդ ես, վարդապետ ես և փրկիստփա, քեզ բազում արծաթ պիտի, զի վասն այդ բազում աշխատեալ ես»: Դեերը մարդուն ներարկում են նորափառության բացիներ, ասելով, թե «դու աղեկ գիտես քան զայս անուն վարդապետ. արդ՝ զիա՞րդ նա զամենայն գիրս մեկնէ և դու ոչ. արդ՝ արա և դու մեկնութիւն և թարգմանութիւն, զի դու առաւել գիտես»²⁶: Դեերը մարդուն նաև ասում են՝ սիրիր այս աշխարհը, այն Աստուծո թշնամին չէ, որովհետև Աստված է ստեղծել աշխարհը:

Թվարկված և բազում այլ մեղքերից խուսափելու համար, ըստ Զուղայեցու, հարկ է խորապես ճանաչել մարդկային բնությունը: Ինքնաճանաչողությունը, սեփական անձի խառնվածքի, բնավորության և հակումների իմացումը կատարյալ իմաստություն է: Յուրաքանչյուր մարդ պետք է գիտենա իր կարողությունները և արժանիքների չափը: Կատարյալ առաքինությունը հենց այդ չափի իմացումն է՝ «զչափ անձինն գիտել՝ կատարեալ առաքինութիւն է»: Զուղայեցու բարոյագիտության մյուս սկզբունքը «ոսկե միջինի» հանրահայտ սկզբունքն է: Մեղքերից կարելի է խուսափել, եթե խուսափենք ժայրահեղություններից: Նա հավատացած է, որ հոգու փրկության համար հարկ է ոչ թե փոփոխել հասարակական հարաբերությունները կամ ընկերային կառուցվածքը, այլ հոգով նորոգվել, ազատվել հոգու մեջ խրված մեղքի փշերից և հետևել քրիստոնեական բարոյականության պատվիրաններին:

Մտաթեոս Զուղայեցու մարդաբանական-իմաստասիրական հայացքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ մարդու հիմնահարցին առընչվող տիեզերական-գոյաբանական, իմացաբանական և ընկերային-բարոյագիտական հարցերը լուծելիս նա հետևում է միջնադարյան հայ աստ-

²⁵ Մատթեոս Զուղայեցի, Գիրք Ութն խորհրդոց մեղաց, Կ. Պոլիս, 1750, էջ 18:

²⁶ Նույն տեղում, էջ 123:

վածաբանական-իմաստասիրական մտքի մեջ ձևավորված հումանիստական ավանդույթներին: Նա քրիստոնեական մարդակենտրոնության դիրքերից է լուծում մարդու տիեզերական կարգավիճակի հարցը, բարձր գնահատում մարդու ճանաչողական հնարավորությունները, քրիստոնեական հումանիզմի դիրքերից իմաստավորում մարդու ընկերային և բարոյական գործունեությունը:

С. А. ЗАКАРЯН— Антропологическое учение Матеоса Джугаеци.— В статье впервые анализируется антропологическая концепция средневекового армянского философа-теолога Матеоса Джугаеци (XIV—XV). Космологические, онтологические, гносеологические и социально-этические вопросы, касающиеся проблемы человека, Джугаеци решает, следуя гуманистическим традициям армянской философо-теологической мысли. Христианский гуманизм и антропоцентризм— характерная черта его антропологического учения.